

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՓԱՐԷՋ.

(ՇՐԷՆԻՆԻՆ, ԴԵՆ ԱՐԷՐԴԻՆ Գ.)

Մատենադարաններից ամենից առաջ զէպի իրան ուշագրութիւն է գրաւում ազգային գրադարանը, որ ունի 1,700,000 հատոր, 80,000 ձեռագիր, 1,000,000 փորագրած պատկերներ և քարտէսներ, բացի նորանից, Փարիզում կան էլի 7 հրապարակական մատենադարաններ, որոնք նոյնպէս բաց են հասարակութեան համար, նորանցից երեք մատենադարանները ունին 300 կամ 200,000 հատորներ. իսկ երկուսը 150,000 և 80,000 հատորներ, Մատենադարանների շարքում կան ամենահարուստ թանկարանների, Պէտքէ յիշել նոցանից գլխաւորի՝ ֆրանսիական բազմադարեան թագաւորների Լուվրի պալատի մասին, որը պէտք է ֆրանսիական ազգի ճարտարութեան յատկացեալ իւր տեսակի մէջ անզոյգ յիշատակարանը համարել, Լուվրի ստորագրութեան ձեռնամուկ լինելու կամք չունինք, որ ի հարկէ կրկազմէր ամբողջ գիրք. մենք այստեղ միայն յիշենք, որ նորա մէջ մէկ ծածքի տակ զետեղվում են 17 զանազան թանկարաններ, որոնք վերաբերում են ճարտարութեանց և մարդկային ամեն գիտութեանց ճիւղերին: Որպէս զի գէթ որքան և իցէ հայեացք ձգել կարողանանք այդ ահագին թանկարանի ժողովածուների վերայ և ծանօթանալ կամենանք նոցա ամենազետեղ գանձերի հետ, պէտք է գործ դնել մէկ քանի ամիս, Միջնադարեան հնութիւնները և կեանքը ուսումնասիրելու համար Փարիզումը կայ Կլիւնի ամենահարուստ թանկարանը՝ զինուորական գիտութեան պատմութիւնը ուսումնասիրելու համար կայ թանկարան հրազինուց (Arsenal), արուեստական տեղեկութեանց համար՝ թանկարան Աօնսերվատորիայի*) ճարտարութեանց և արհեստների, և անթիւ անհամար մասնաւոր ժողովածուներ և թանկարաններ, որոնք հաշվում են ամբողջ հարիւրներով, Բացի նորանից լուսաւորութիւնը տեսակաւ նապէս տարածելու համար հանրագուտ տեղեկութիւններին շատ նպաստում են անդադար աշխարհահանգէսները, որոնց համար քաղաքի ամենալաւ մասումը (Եղիւսեան դաշտերում) կառուցած է ամենա-

(*) Կօնսերվատորիա. Լատ. այն հաստատութիւնն է, ուր անվարձ սովորացնում են երաժշտութեան, նուագաձուլութեան կամ երգեցողութեան ընդունակ մանուկներին, Փարիզի Կօնսերվատորիան դպրոց երգեցողութեան անունով. (Ecol de chont) 1795 թ. փոխում է Institut royal de musique անունով:

մեծ շինութիւն, որի միջումը առանց մէկը մէկին նեղութիւն պատճառելու, կարող են շարժուել միաժամանակ 12 — 15,000 այցելուներ:

Արքան Փարէզը բաւականացնումէ լուսաւորութեան պիտոյքներին, նոյնքան էլ իհարկէ, հոգս է անում բաւականութիւն տալու ուրիշ քարոյական և մտաւորական մարդկային պիտոյքներին: Արովհետեւ քաղաքական և հասարակական կեանքը ունի իւրաքանչիւր ֆրանսիացու համար մեծ նշանակութիւն, ուստի Փարէզը ամենից առաջ հոգս է անում այն մասին, որպէս զի իւրաքանչիւր ընթերցողը գտնէ իր համար Փարիզի ժողովրդոց մէջ այնպիսի մէկ հրատարակութիւն, որ հարգէ նորան բոլոր հարկաւորը և նորա համար հետաքրքիրը:

Լրագիրների և պարբերական հրատարակութեանց թիւը 1876 թ. արդէն հասնումէր 836-ի (այժմ հաւաստի է, որ աւելի կը լինի): Արպէս զի կարելի լինի կազմել փոքր ինչ հասկացողութիւն այդ բազմատեսակ ժողովրդոց բնաւորութեան և նշանակութեան մասին, յիշենք այն, որ ի թիւս 836 պարբերական հրատարակութեանց՝ 83 հ. նուիրուած են հաշուագիտութեան և քաղաքական տնտեսութեան. 77 հ. արուեստականութեան. 74 հ. բժշկականութեան և գեղագործութեան. 52 հ. գրականութեան, 63 հ. նորաձեւութեան, 66 հ. իրաւաբանութեան, 49 հ. կրօնական խնդիրների, 43 հ. իսկական արհեստներին, 31 հ. գիւղատնտեսութեան, 20 հ. աշխարհագրութեան և պատմութեան և չն, Աւելորդ է նկատել թէ ամենայնայնապէս քաղաքական լրագիրներից ունի մէկ քանի տասն հազար բաժանորդներ. իսկ նոցանից շատերը ունին հարիւր հազարաւոր բաժանորդներ. ինչպէս օրինակ Փարիզում ամենից աւելի տարածուած լրագիրը Petit Journal իւրաքանչիւր օր բաժանվումէ 650 000 օրինակ:

Եւ արդարեւ այսպէս էլ Փարիզի թատրոնների, զբօսարանների և ծառադարձ ուղիների, հիւանդանոցների, անկեղանոցների, պանդոկների, արհեստանոցների, գործարանների, վաճառատների, հանրակառքերի վերայ որ կողմից էլ նայենք, ամեն կողմից կը հանդիպենք այնպիսի ահագին մեծութեամբ, այնպիսի մեծամեծ ծախսերով, այնպիսի ընդարձակ ձեռնարկութեամբ ու հաշուով այնպիսի բազմաթիւ գործադրողների, որոնց նմանը չի կարող մեզ ներկայացնել Եւրոպայի մայրաքաղաքներից ոչ մէկը: Ահա՛ զորօրինակ ծառադարձ զբօսարանների մէջ, ուր վիստումեն միշտ բազմաթիւ մարդիկ, մեծ օպերայի շինուածն է կանգնած, որը նստել է քաղաքին 36,000,000 ֆրանկ ծախս. ահա միւս հրապարակի վերայ քնարերգական թատրոնը, որ իւր բեմի վերայ տալիս է ֆէերներ (գիւթական ներկայացուցիչներ), որոնց ներկայացնելիս՝ թատրոնի վարչութիւնը ծախսումէ 300 — 400,000 ֆրանկ: Ահա՛ քաղաքի երկու ծայրումը երկու ահագին վաճառատներ (մագազին) ձեռագործ վաճառքի, որոնց իւրաքանչիւրը բռնումէ ամբողջ թաղ: Այս վաճառատների իւրաքանչիւրի մէջ 1200 կամ 1500 եր-

կու սեռի գործակատարներ կան և նոցա մէջ շինած նորաձեւութեանց համար աշխարհահասնդէսներին ձմեռնային ժամանակ այցելումն մէկ աւուր մէջ 40 — 50,000 գնողներ: Ահա՛ ահագին կառքեր լծուած հազարաւոր նորմանգեան արագավազ երիւմարներով, որոնք տանումն ձեզ երեք սե գրամով (6 կոպէկ) քաղաքի մէկ ծայրից միւսը: Այդ կառքերը պահումէ ընկերութիւնը, որի տնօրէնութեան ներքոյ միշտ գտնվումն 25 — 30,000 ձիեր: Ահա՛ զբօսարանի և հրապարարակի անկիւնում Կաֆէն (պանդոկ), որը ձեռք է բերում տարին միայն շաքարեայ պաղպաղակի վաճառումից 200,000 ֆրանկից ոչ պակաս: Ահա՛ սեղանատների աթանագին սիստեմ, որ պատկանումէ Փարիզի գլխաւոր մտավաճառ Գիւլալին, որ սփռել է այդ գեղեցիկ և մաքուր շինուածները Փարիզի 60 թաղերի մէջ և օրը մէկ ու կէս ֆրանկով կուշտ և համեղ կերակրումէ տասնեակ հազարաւոր ժողովուրդ: Եւ ահա՛ պատկերը լրացնելու համար էլի մէկ քանի մեծ մեծ թուանշաններ, որոնք կարող են տալ փոքր ինչ հասկացողութիւն փարիզեան կեանքի ձեւի և չափի մասին: Փարիզի արհեստանոցներում հաշվումն 405,000 արու և 411,800 էգ գործաւորներ: Փարիզի փողոցներում թափառումն 6000 կին պտղավաճառներ և մրգավաճառներ, 3000 ծաղկավաճառներ, 5900 խմորեղէն վաճառողներ, որոնք քարշումն իրանց վաճառքով բեռնաւորուած սայլերը, և երկու սեռից 200,000 անձինք, որոնք չունին սահմանեալ պարապմունքներ: Հետաքրքրութեան համար կարելի է աւելացնել որ Փարիզի արուեստանոցների մէջ 16 հատը բացառապէս զբաղուած են շինծու աչքեր պատրաստելով, իսկ Փարիզի վաճառատների մէջ 7 ամենահարուստները առուտուր են առնում բացառապէս փոստայի հին մարկաներով:

Փարիզի այդ ընդհանուր պատկերից մենք կարող ենք հարեանցի մեր հայեացքը ձգել նորա պատմաբանական աճման և զարգացման վերայ. այն երկար և իմաստուն ճանապարհի, որի վերայ այդ ահագին կենտրոնը կարողացել է զարգանալ առաջուայ Լուտեցիա կոչուած աղքատիկ տեղումը:

Յուլիոս Կեսարոսի ժամանակներում և նորա գաղղիական պատերազմների այն տեղը, որ այժմ Փարէզն է՝ պատկանումէր Կելտական ցեղի Պարիզեաններին (Parisii): Գլխաւոր քաղաքը Պարիզեանների կոչվումէր Լուտուսէզի, որ նոցա Կելտական բարբառով նշանակուլ մէր ջրային բնակարան: Հռովմայեցիները և Յոյները այդ քաղաքը անուանումէին Լեվկոտեցիա, Լուկոտոցիա շատ անգամ Լուտեցիա Պարիզացւոց (Lutetia Parisiorum): Լուտեցիան զետեղուած էր Սենա գետի կղզու վերայ, շրջապատած հաստ փայտեայ պարիսպներով, որ էր ամրոցի փոխարէն Պարիզեան ցեղի համար: Այս տեղումը Պարիզեանները թագցնումէին պատերազմի ժամանակ իրանց ճերուկներին կանանց և երեխաներին, իսկ խաղաղութեան ժամանակ նոցա Գրուիգնե-

րը (քուրմերը) ժողովվումէին այս տեղում իրանց խորհրդաւոր կրօնական ծէսերը և դատաւորական պարտաւորութիւնները կատարելու համար: Քրիստոսի թուականից 54 տարի առաջ Կեսարոս գումարեց Լուտեցիայում գաղղիական ժողովրդի բոլոր աւագանիները ընդհանուր ժողով: Իսկ Վերցինգետորինկսայ Հռովմայեցւոց դէմ ապստամբութեան ժամանակ, որի մէջ Պարիզեաններն էլ էին մասնակից, Կեսարը նուաճեց կործանուած և այրուած Լուտեցիային և հրամայեց ամրացնել Հռովմայեցւոց ձեռով Հռովմայեցիների տիրապետութեան ներքոյ, ինչպէս հարկատու քաղաք (urbs vectigalis), Լուտեցիան սկսաւ շուտով ընդարձակուիլ, իսկ նորա բնակիչները սկսան հարօտանալ, որովհետեւ նոցա շահաւէտ գրութիւնը ջրային ճանապարհով ոչ սակաւ նպաստեց նոցա զարգացմանը վաճառականութեան յարաբերութեանց մէջ: Հռովմայեցիների կայսրներներից շատը ընտրւումէին Լուտեցիան քիչ կամ երկար միջոցի համար իւրեանց թագաւորանիստ: Նոցանից առաջինը Կոստանդին Քլորն էր, որ շինեց Սենա գետի ձախ եզերքում հոյակապ պալատ և ամրոց, (որոնց աւերակները դեռ պահպուծն Կլիւնի թանգարանի շինութեան մէջ): Նոցանից յետոյ այնտեղ բնակւումէին մէկ միջոց մեծն Կոստանդին, Կոնստանցի, Յուլիոս ուրացողը, որ այս տեղում 360 թ. կայսր հրատարակուեց, նորանից յետոյ Վաղենտինոս Ա. Վաղենցիոս և Հրացիան ևլն: Սկսած 358 թ. Քրիստոսի, Լուտեցիան սաստիկ ընդարձակուելով ստանումէ արդէն տարեգրութեանց մէջ անունս (Civitas Parisiorum) քաղաք Պարիզացւոց: Իսկ յետոյ 451 թ. անուանվումէ միայն Պարէզ կամ Պարիզեան: Սրբուհին Ճեննվեմ զգատեց քաղաքը Ատիլլայի յարձակումից, և այդ ժամանակից այդ սրբուհին յարգվումէ իբրեւ պաշտպան քաղաքի: Փրանկաց թագաւոր Քլոդովիկ 486 թ. տիրեց Փարիզին, շատ ուշ չըջապատեց պարիսպներով և մայրաքաղաք հրատարակեց: Յետին ժամանակներում Քլոդովիկի թագաւորութիւնը բաժանուելուց յետոյ, Փարէզը մէկ միջոց Նէյստրիայի գլխաւոր քաղաքն էր, և իններորդ դարում սաստիկ տանջուեց անվեհեր նորմանների արշաւանքից և զարհուրելի սովից: Փարիզի բնակիչները 885 և 886 թ. ենթարկուեցին 13 ամսեայ պաշարման, բայց քաջ Օդոյ կոմսի առաջնորդութեամբ հալածեցին թշնամիներին: Ինքն կոմս Օդո ամբարձաւ ի թագաւորութիւն, և նորա ժառանգի, Գուգո - Բապետի ժամանակ քաղաքը վերջնականապէս հրատարակուեց մայրաքաղաք բոլոր ֆրանկաց թագաւորութեան (987 թ.): Գուգո - Բապետն էլ նշանաւոր կերպով ընդարձակեց քաղաքը և տուեց նորա քաղաքացիներին նոր, վսեմ իրաւունքներ: Նա դարձրեց շատ ուշագրութիւն և հոգս և ներքին շինութիւնների և քաղաքի վարչութեան հարկերի կանոնաւոր ժողովելու և բաժանման և Փարիզի վաճառականութեան ընդարձակելու վերայ: Այդ ժամանակներին մօտ լուսաւորութիւնն էլ Փարիզի մէջ արեց բաւական մեծ քայլեր, Փարի-

ղի գպրոցները, որոնց մէջ դաս էին աւանդում այնպիսի նշանաւոր ուսումնականներ, ինչպէս Պետրոս Լոմբարդացի և Աբէլեարդ, ստացան մեծ և արժանաւոր համբաւ։ Աւերջին ժամանակներում Վարդուս Փիլիպպոս - Օգոստոս Բ. ի օրով, Փարէզը նորա հրամանով (1190 և 1192 թ.) փոխուեց անառիկ ամրոցի, շրջապատուեց բոլոր տարածութեան վերայ հաստ քարեայ պարիսպներով 500 աշտարակներով և խոր խրամներով։ Սենա գետն անգամ կապուեց հաստ շղթաներով սիւների վերայ, նոյն թագաւորի օրով շինուեց այժմեան Լուվրի տեղում առաջին Լուվրի աշտարակը. փողոցները առաջի անգամ սալոյատակուեց (1184 թ.) և բոլոր քաղաքը վարչութեան կողմից 8 թաղի բաժանուեց։ Աւելորդ չէ յիշել, թէ այն ժամանակները եկեղեցիները, թագաւորների և եպիսկոպոսների պալատները միայն քարեայ էին, իսկ մնացած շինութիւնները և բնակիչների տները փայտեղէն էին։ Առաջին համալսարանը շինուեց 1200 թ. որ ամենահռչակաւորն էր միջնադարեան համալսարաններից, և նորա աստուածաբանական բաժինը շուտով ձեռք բերեց այնպիսի նշանակութիւն, որ ուսանող այցելուների թիւը հասաւ 20000 ի։

Նշանաւոր րէֆորմներ Փարիզի Աւարչութեան և Փարիզացւոց ներքին կեանքի կազմակերպութեան մէջ եղած սուրբ Լուծովիկոս Թ. ի ձեռքով (1226 թ.) որ մտքեց կանոնաւոր կազմակերպութիւն Փարիզի արհեստանոցների մէջ. սահմանափակեց քաղաքագլխի իշխանութիւնը, (brève). հաստատեց վճռաջինջ դատարանը և երգմնաւոր նօտարների կարգը։ Նորա ժամանակով Փարէզը իրաւունք ստացաւ ունենալ կանոնաւորապէս կազմած քաղաքական զօրք։ Փիլիպպոս Գ. գեղեցկի օրով քաղաքը կենտրոն դարձաւ, որի մէջ միանումէին բոլոր երկրի կառավարութեան թելը և սկսաւ պարլամենտական ատեանը, Հէնց այստեղ հաւաքվումէին ընդհանուր նահանգապետները։ 1348 թուականի ժանտախտը զարհուրելի կերպով դատարկեց Փարէզը. բնակիչների ամբողջ երրորդ մասը զոհ գնացին այդ ցաւին։ 2նայելով այդ թշուառութեան վերայ, Փարիզի աճելութիւնը ամեն կողմից այնպէս արագ առաջ էր գնում, որ ԺԴ. դարու վերջումը Փարէզը շրջապատուեց նոր պարիսպներով և հիւսիսային կողմից քաղաքի հետ միացան ութ թաղեր ևս։ Ներքին անկարգութիւնը, ներքին պատերազմները և կռիւները Անգղիայի հետ պատերազմների ժամանակ ԺԴ դարու վերջումը և ԺԵ դարու սկզբում դարձեալ հասցրին Փարիզին անթիւ վնասներ և բնակիչների թիւը շատ պակասացրին, որոնք մեռան ընտանի խռովութիւններից, սովից և ժանտախտից։ 2նայելով այս բոլորին 1483 թ. այսինքն Լիւծովիկոս ԺԱ. ի թագաւորութեան վերջումը Փարիզի մէջ բնակիչների թիւը հասաւ 300,000 ի։ Շատ նպաստեց խաղաղութեան երկար շրջանը, որպէս լի քաղաքը արագապէս վարդանար և ծաղկէր։ 1464 թ. կազմուեց Փարիզում քաղաքական փոստան, 1470 թ. բացուեց

առաջին տպարանը Սօրբօնի (Համալսարանի) շինութեան մէջ. իսկ 1472 թուին՝ Համալսարանի բժշկական բաժինը, Ֆրանչիսկոս Ա. ի թագաւորութեան շրջանում Փարէզն արգէն ծառայումէր որպէս ժողովատեղի ամեն բանի, որ Ֆրանսիայի պարծանքն էր ու գեղեցկութիւնը — ինքը թագաւորը լինելով պատուոյ արուեստների և ճարտարութեանց, ամեն ջանք գործ էր դնում զարգարել Փարէզը լաւագոյն յիշատակարաններով։ Այսպէս, նա նոր Կօլլէժի հիմը դրեց, հրամայեց քանդել Լուվրի հին աշտարակը և նորա տեղը հրաման տուեց սկսել շինել այժմեան գեղեցիկ Լուվրի պալատը և ուրիշ ապարանքներ ծան - Գուժօն հռչակաւոր ճարտարապետի հրահանգներով, Հենց նորա ժամանակ սկսուեց շինութիւնը Փարիզեան վաճառականաց իրաւարանի, որ վերածնութեան շրջանի ամենագեղեցիկ շինութիւններից մէկն է։ Նորա ժամանակում սկիզբն դրուեց արքայական պալատներում ապագայ հարուստ ժողովածուների և իտալական արուեստագէտների արտագրութեանց։

Այդ շրջանի ետեւից եկաւ կրօնական պատերազմների զարհուրելի ժամանակամիջոցը, որոնց մասնակցումէր Փարէզ քաղաքը մեծ ջանքով, պաշտպանելով կաթոլիկութիւնը և դաշնակցութիւնը Փարիզի փողոցների մէջ 24 օգոստ. 1572 թ. տօնուեց այն սարսափելի «արեան աղատութիւնը» կամ «Բարդուղիմէոսեան կոչուած գիշերը», որի ընթացքում սպանուեցին 2000 անմեղ գուգնետներ (բողոքական)։ Նորանից յետոյ, անդադար կոիւնների ժամանակ երկու անգամ պաշարուած Փարէզը շատ ամենատեսակ թշուառութիւններ կրեց, և այն ժամանակ միայն անձնատուր եղաւ Հենրիկոս Գ. ին, երբ նորա մէջ 14.000 ի չափ մարդիկ մեռան սովից, Հենրիկոս Գ. աւարտեց Տիւլլերի պալատի շինութիւնը, և ճեմելիքով միացրեց Լուվրի հետ. վերջացրեց վաճառականաց իրաւարանը, Սենա գետի վերայ շինեց գեղեցիկ և մինչև ցայժմ ամբողջ մնացած քարեայ կամուրջը. բացեց մէկ քանի ընդարձակ և ուղիղ փողոցներ և բաւական օգնեց քաղաքի մատենադարանի հարստանալուն։ Մարիամ Մեդիչիս 1615 թ. Լիւքսամբուրգի պալատի և այգւոյ հիմը դրեց, Փարէզը 1615 թ. ճանաչուեց առանձին արքեպիսկոպոսանիստ թեմ։ 1622 — 1630 թ. Փարիզի մէջ կառուցուեցին շատ նոր և ընդարձակ շինուածքներ, որոնք ամբողջ մնացել են և մինչև ցայժմ, մասամբ քաղաքի հին հաստատութեանց համար, մասամբ նորերի համար, որոնք հարկաւոր էին Փարիզի հասարակական կեանքին։ Այս միջոցին կառուցուեց Սօրբօնի շինութիւնը, շինութիւնը Ֆրանսիական ճեմարանի և ուսումնարանը մեծին Լիւդովիկոսի (Collège Louis grand), Հռչակաւոր Բիշօփէ, որ մասնակցումէր բոլոր այդ հաստատութեանց շինութիւններին, նպաստումէր և նոր Պալէ — Բոյեալի թագաւորական պալատի շինութեանը, Փոքր ինչ յետոյ շինուեց նոր ազնուապետական Սան — Ժերմենի թաղը. իսկ քաղաքի երկու միւս

արուարձանների հետ միացան Սենտ — Օնորէի և Սենտ — Անտուանի գիւղերը, Լիւդովիկոս ԺԴ ի անչափահասութեան ժամանակը Փարէզը դարձել էր ներքին խռովութեանց տեղի (Փրօնզի ժամանակ*) և նորա արուարձաններում ծագեցին արիւնհեղ սաստիկ կոիւններ, Սակայն Լիւդովիկոսի երկար թագաւորութեան օրերում Փարէզը վերջնակա- նապէս ձեռք բերեց այն կերպարանքը, որը պահեց յետոյ մինչև այժ- մեան դարու կէսը, Լիւդովիկոս ԺԴ. բացեց 80 նոր փողոցներ, ըն- դարձակեց և մաքրեց հները, հոգս արեց կարգի բերելու ծառուղիները և լայնատարած հրապարակները: Այսպէսով Յաղթութեան և Վան- դօմի հրապարակները երեւցին, Իսկ Փարիզի ներքին պարիսպները քանդեցին և նորա առաջուայ տները փոխեցին յաղթական կամարնե- րով: Հռչակաւոր Լենօտը ճարտարապետը աւարտեց Տիւլլէրի պալատի շինութիւնը և զարդարանքը, ընդարձակեց Տիւլլէրի այգին, և Եղիւս- եան դաշտը ուղիղ գծերով հարթ ու հաւասար բաժանեց:

Քաղաքի հաղորդակցութիւնները առանձին թաղերի հետ բաւական հեշտացան՝ Սենտ գետի վերայ նոր կամուրջներ շինելով և հները ըն- դարձակելով: Նոյն իսկ ժամանակում առաջին անգամ՝ սկսեցին Փա- րիզի փողոցները լապտերներով լուսաւորել և հիմը դրուեց շատ բա- րեգործական հաստատութիւնների, զորօրինակ, անկարող հինաւորց զինուորների, որբանոցի և քաղաքական հիւանդանոցի (Hapital general), Առհասարակ Լիւդովիկոս ԺԴ ի թագաւորութեան շրջանը պէտքէ հա- մարել յատկապէս Փարիզի զարգացման և ծաղկելու ժամանակամիջոց, որից սկսել է յատկապէս նորա համաշխարհական նշանակութիւնը. նա իւր մշտական կեցութեան համար Վերսայլը ընտրած լինելով՝ թէպէտ ոչ տունը և ոչ ինքն Փարիզումն էր գտնվում, սակայն Փարէզը վերջ- նականապէս այդ միջոցում՝ դարձաւ այնպիսի կենտրոն, ուր գիմում էին ոչ միայն լաւագոյն Քրանսիայի ոյժերը, լաւագոյն խելքերը և լաւագոյն տաղանդները, այլ և նոցա հետ միասին և բաղմութիւնը տոհմական և հարուստ օտարականների, որոնք գալիս էին այստեղ սովորելու պատշաճ քաղաքավարութիւն և աշխարհի մէջ նուրբ վարմունք, և տանում էին իրանց հայրենիքը Քրանսիական նորաձեւե- թիւնները և սովորութիւնները: Գիտութիւնները և արուեստները նոյն- պէս հասան բարձր աստիճանի զարգացման Լիւդովիկոսի փառաւոր թագաւորութեան ժամանակ: Այդ շրջանում սկիզբն առաւ համալսա- րանում Մազարինեան ժողովը, հիմը դրուեց զանազան ճեմարաննե- րի, շինուեց աստղաբաշխական դիտանոց, թատրոններ Քրանսիական

*) Այս անունով կուսակցութիւն կար Ֆրանսիայում, որ ոտի էր կանգնել Լիւ- դովիկոս ԺԴ ի մօր Աննա Աւստրիացու դէմ, կամ լաւ եւս ասել, Մազարինի կար- դինալի կառավարութեան դէմ:

զաւէշտների և օպերանների (երաժշտական ներկայացումն) համար, այդ իսկ ժամանակումն էլ գրականութեան ոսկեդարն էր: Անցեալ դարու վերջումը Փարէզը զարդարուեց նոր թատրոններով, Լիւդովիկոս ԺԻ թրերում, որը բացի դորանից շատ ընդարձակեց և հարստացրեց Բուսաբանական այգին (Jardin des Plantes): Առաջին յեղափոխութիւնը 1789 թ. շատ նպաստեց քաղաքի բնաւորութիւնը և կերպարանքը փոխելու: Բաստիլի առումը և (14 Յուլիսի 1789 թ.) զարհուրելի թագաւորական բանդի կործանումը, սկիզբն դրին զանազան կործանման և աւերման, ինչպէս նոյն ինքն Փարիզի մէջ, նոյնպէս և բոլոր Ֆրանսիայում, որ շարունակուեց մինչև տասը տարի: Այսինքն ց1799 թ. Քանդուեցին և աւերուեցին շատ շինութիւններ, որոնք յիշումէին թագաւորական իշխանութիւնը, և բարձր ազատականութեան տիրապետող նշանակութիւնը: Միայն հիւպատոսութեան ժամանակ Փարէզը նոր ի նորոյ սկսաւ իւր առաջին իտաղաղ կեանքը վարել և շարունակեց յառաջագիմել բարւոքման և զարգացման ճանապարհով: Թէպէտ նապոլէօն Ա. ի կարճ կառավարութեանը չը յաջողուեց մինչև վերջը հասցնել իւր ընդարձակ ծրագիրները Փարիզի շինութեանց և վերանորոգութեանց մասին, սակայն նա շատ բան արեց քաղաքի բարւոթեան և իր մայրաքաղաքը զարդարելու համար: Յեղափոխութեամբ կործանուած եկեղեցիները նորոգելով և զարդարելով, նա ընդարձակեց հին հրապարակները և շինեց նորերը: Քաղաքի ինչ ինչ երեւելի մասերը շքեղացրեց, շարունակեց Սենա գետի ափունքի ճանապարհը և Փարիզի ընդարձակ և բարդ ջրաբաշխութեան սիստեմի առաջին հիմը դրեց: Հռչակաւոր Վանդոմի սիւնը, ահագին յաղթական կամարը Աստղի (Arc de l' Etoile) Եղիւսեան դաշտերում և երեք նոր կամուրջներ Սենա գետի վերայ (կամուրջ Աուստերլիցի, կամուրջ Յենայի, կամուրջ Ճարտարութեանց), այդ բոլորը կառուցուեցին նապոլէօնի օրերում: Նապոլէօն Ա. ի ժամանակ սկսաւ շինութիւնը Բօրպայի (Bourbon) ժողովատեղի վաճառականաց) և ահագին դատարանի վաճառականաց: Ներքին քաղաքական առուտուրի և բնակիչների յարմարութեան համար բացուեցին նոր և ընդարձակ շուկաներ Փարիզի զանազան քաղաքամասներում:

Նապոլէօնի պատերազմական յուղմունքների շրջանը վերջացաւ Փարիզի համար էլ յուղմունքների անցքերով 1814 և 1815 թ. կռիւներով՝ մայրաքաղաքի պարիսպների մօտ, և դաշնակիցների Փարիզում մնալովը: Այնուհետեւ Լիւդովիկոս ԺԼ ի Վարովոս Ժ ի և Լիւդովիկոս — Փիլիպպոսի կառավարութեան ժամանակ քաղաքի կերպարանքը չը կրեց առանձին — երեւելի փոփոխութիւններ, Բարւոքուեց և կատարելագործուեց միայն այն՝ ինչ որ կար և քաղաքի քանի մի մասերը զարդարուեցին նոր յիշատակարաններով և նոր եկեղեցիներով: Յուլիսեան յեղափոխութեան նախընթաց (1830) օրերում Փարէզը ար-

դէն զետեղումէր իր մէջ միլլիոնի չափ բնակիչներ, իսկ արտագրութիւնները նորա գործարանների և ձեռագործութեան հաւասարվումէին արդէն 214,000,0000 ֆրանկ արժողութեան, որոնցից ինքը Փարէզը գործագրումէր կէսիցն աւելի: Լիւզովիկոս Փիլիպպոսի թագաւորութեան ժամանակ շինուեցին Փարիզի ահաւոր ամրոցները, սակայն նոքա չըկարողացան պաշտպանել այդ թագաւորին 1848 թ. խռովութիւնից, որ չորս տարուանից յետոյ առաջնորդեց ֆրանսիային դէպի երկրորդ կայսերութիւնը: Այս շրջանը շատ կողմերով տխուր և շատ վնասաբեր լինելով Ֆրանսիայի բարոյական և մտաւորական աճման համար, երեաց շատ բարերար Փարիզի և փարիզացւոց համար: Քաղաքը Նապոլէօն Գ. ի օրով աճեց մինչ նորա ահագին այժմեան չափը, և ներքուստ նորոգուեց նոր աւելի կանոնաւոր պլանով, որ առաւել նպաստեց նորա օդի բարեխառնութեանը: Նեղ, մութ, ցեխոտ փողոցները անհետացան Փարիզի շրջականներից անգամ և փոխուեցին նոր, լուսաւոր գեղեցիկ կառուցուած թաղերի:

Լայն տերեւախիտ ծառուղիները շրջապատեցին Փարէզը ամեն կողմից: Քաղաքի լուսաւորութիւնը, ջրաբաշխութիւնը և ջրանցքները հասած էին վերին աստիճանի կատարելագործութեան, Փարիզեան զբօսարանների քանակութիւնը դեռ աւելի մեծացաւ Բոլոնեան անտառով, որ շատ միլլիոնաւոր ծախսերից յետոյ դարձաւ շքեղ և ահագին պարկ^{*}): Փարէզ քաղաքի հարստութիւնը և նորա առուտուրի և արտագրութեան չափը աճեցին երկրորդ կայսրութեան ժամանակ, երբ Փարիզումը երկու անգամ 1855 և 1867 թ. բացին փայլուն աշխարհահանդէսներ: Նոյն իսկ քաղաքի բնակիչները 1869 թ. բաղկանումէին 1,875,000 մարդկանցից երկու սեռի: Բայց անբախտ պատերազմը Գերմանիայի հետ, որ առիթ դարձաւ երկրորդ կայսերութեան կործանմանը և ֆրանսիայի բարոյական վերանորոգութեանը, մի և նոյն ժամանակ Փարիզին հասցրեց անթիւ վնասներ: 19 Սեպտեմբ. 1870 թ. սկսաւ Փարէզ քաղաքի պաշարումը գերմանական զօրքերից, որոնց պէտք էր 85 վերստաչափ տարածութիւն բռնել և կռուել պաշարուողների զօրքի հաւասար ուժերի հետ: Որովհետեւ Փարիզի բերդապահ զօրաց թիւը հասնումէր մինչև 500,000 ի, Պրուսացւոց գլխաւոր հաշիւը իսկապէս հիմնովումէր նորա վերայ, որ Փարէզը դժուար չի լինիլ սովով ստիպել անձնատուր լինելու: Բայց այս հաշիւը չըյաջողուեց, վասն զի Փարիզի քաղաքական վարչութիւնը ցոյց տուեց շատ նշանաւոր գործունէութիւն և կարողացաւ քաղաքին մեծ պաշար հասցնել: Պաշարումը

(*) Պարկն է բառ ֆրանս. որ նշանակումէ բնական կամ տրուեցուցական անտառ: որի մէջ շինուած են ճանապարհներ հետեւեակ կամ կառքով զբօսնելու համար: սովորական պարկը շրջապատվումէ պատնէշներով:

ձգեց, երկարեց հինգ ամսաչափ, և ըստ խոստովանութեան նոյն իսկ գերմանացի զինուորական պատմագրերի էր շարք հերոսական յաղթութեանց և մեծամեծ քաջութեանց Փարիզի բնակիչների կողմէն: Միայն պակասութիւնը տաղանդաւոր զօրավարների և անգործունէութիւնը զօրքերի, որ դեռ մնացել էին հարաւային ֆրանսիայում, նպաստեցին այն բանում, որ Պրուսսացիք վերջապէս յաղթեցին համաշխարհական քաղաքին և ստիպեցին նորան անձնատուր լինել: Այս գէպքում քաղաքը վճարեց 200,000,000 միլլիոն պատերազմական ծախս, կորցրեց բոլոր զէնքերը և մարտկոցների պաշարները և թշնամու ձեռքը անցան Փարիզի պահապան զօրքերի բոլոր զէնքերը, որոնք պատերազմի գերի հրատարակուեցին: Յայտնի չէ յատկապէս, թէ այդ հինգ ամսուայ պաշարման ընթացքում Փարիզում որքան մեռան վերքից, սովից և վարակիչ հիւանդութիւնից, բայց բոլոր այդ թշուառութիւնները չնչին էին համեմատելով այն բաների հետ, որոնց բերեց իւր հետ Փարիզի համար ներքին կռիւը Վերսալի վարչութեան Փարիզեան Կոմիտէի հետ*): Այս կռուի հետեանքն էին վայրենի, կատաղի արտայայտութիւնների Կոմիտէականների կողմից, որոնք չարութեան միտք յղացան իրանց կորստի նախընթաց օրը, քաղաքը Վերսալցիներին յանձնելով տապալել, կործանել Փարիզի անցեալ պատմութեան բոլոր լաւագոյն յիշատակարանները և նորա հասարակութեան ամենափսիմ շինութիւնները. աւերեցին Տիւլլիերեան, Բուրբօնեան պալատները, Լուվրի մի մասը, վաճառականների իրաւարանը, Գանձուց նախարարութիւնը, և ուրիշ շատերը: Վերսալցիներն էլ այս կատաղութեանը պատասխանեցին նոյն մոլեգին գազանական անօգուտ բարբարոսութեամբ: Արիւնհեղութիւնը Փարիզի փողոցների մէջ երկարեց մի քանի օր. և բացի դորանից 30 հազար գերի ընկան Վերսալցիների ձեռքը, որոնցից 20,000 կոմիտէականներ դատապարտուեցին մահով և

(*) Կոմիտէն կամ Կոմիտէիզմ. Արեւմտեան Եւրոպայում մասնաւոր Ֆրանսիայում փիլիսոփայական քաղաքական վարդապետութիւն է, որ ընկերական կեանքի հիմը ընդունումէ բոլորովին հաւասարութիւն ամեն հասարակութեան անդամների պահանջումէ հաւասար շահեցողութիւն կայքի եւ ամենատեսակ անձնական սեպհաւանութեան ջնջելը եւ բացառիկ տիրապետութիւնը, Այս վարդապետութեան ծագումը վերագրումեն գաղղիական յեղափոխութեան, 1840 թ. յայտնուեցին երեք կուսակցութիւն Կոմիտէիստների (Travailleurs egalitaires, реформисты,) եւ Իկարեան Կոմիտէիստներ, Փարիզը տեսաւ առաջին խռովութիւնը Կոմիտէիստների, որին հեշտ էր սանձահարել, վասն զի բոլոր ուժը անստամբների չորս հարիւր հոգուց աւելի չէին, եւ երկրորդ խռովութիւնը 1871 թ. նորանից յետոյ, երբ Պրուսացիները թողին Փարիզը եւ հեռացան: Այս տպտամբութիւնը զսպել արդէն այնպէս հեշտ չէր, որովհետեւ Կոմիտէականների կողմ նակեցները էին տառնական հաղարներ:

տարագրուեցին: Երբ խաղաղութիւնը վերականգնեց, կարգը հաստատուեց քաղաքի մէջ, և կարելի էր ձեռնարկել քաղաքի նորոգութեանը և բուժել նորա վէրքերը, այն ժամանակ յայտնի եղաւ որ երկու տարուան ընթացքում 1870 և 1871 թ. Փարիզի բնակիչների թուից պակասել են 100,000 մարդ: Չափազանց հետաքրքիր է պատմական մտքով փաստը այն կենսականութեան, որը մինչև այժմ շարունակում է յայտնել Փարէզը իր իշխող նշանակութեան մտքով մտաւորական և արուեստական կենտրոնի իր իշխողութեան մտքով բոլոր մնացեալ Եւրոպայի վերայ: Թէ հասարակական կեանքի մէջ, և թէ ծէսերի և բարոյց մէջ և անդադար յարմարացնելում նորանոր սկզբունքների, նորանոր իդէաների կեանքի հոգևորական և նիւթական բոլոր երևոյթներին: Աորան շատ նպաստում է նոյն իսկ ֆրանսիական ազգի, կայստան, զուարթ, հաստատակամ բնութիւնը, որ անսպասելի ջերմաջերմ դիմում է դէպի կատարելագործութիւն: Տաղանդաւոր ֆրանսիացին բոլոր արդէքները արագ կշռադատելով, որոնք կարող են հանգիպել յայտնի նպատակի հասնելու ճանապարհների վերայ, չի դէմ առնում ոչ մի բանի առաջ, ստեղծագործում է միշտ նորը նաև այն բանից, ինչ որ հնարած է և գտած ուրիշներից: Կարողանում է հանել այնպիսի օգուտ, այնպիսի յարմարութիւններ, որոնք հնարողի անգամ մտքով անցած չեն: Եւս առաւել Փարիզացի ֆրանսուզը ի բնէ այնպէս սաստիկ հաւատացած է Փարիզի արժանաւորութեան և նշանակութեան վերայ և ամեն բանի, ինչ որ Փարէզը արտադրում է, համոզուած լինելով նորա կուլտուրական (կրթական) պատմական նշանակութեան վերայ բոլոր Եւրոպայի և մասամբ բոլոր աշխարհի համար, այնպէս որ այդ մեծամիտ հաւատը տալիս է նորան արծուի թևեր, որ շատ անգամ ուղղում է նորա թռիչքը դէպի այնպիսի բարձրութիւն, որ ոչ ոք չէր համարձակի սխալ: Այս իսկ Փարիզու ֆրանսիացիների յատկութեանց մէջ հիմնվում է այն համաշխարհական Փարիզի նշանակութիւնը, որը այնպէս ի զուրջանք են անում ուրիշ ազգերի մայրաքաղաքները նորանից յափշտակել: Մենք պատրաստ ենք համաձայնելու այն բանի հետ, որ բարձրանալը գերմանական կայսերութեան և երկաթեայ կանցլերի (առաջին նախարար) քաղաքականութեան ահաւոր իշխանութիւնը, որ խեղդել է շատ լաւ սկզբունքներ Եւրոպայում, սաստիկ վնասեց ֆրանսիային, ոչ այնքան նիւթական, որքան բարոյապէս թուլացնելով առժամանակ նորա հաստատամտութիւնը: մենք պէտք է խոստովանուենք և այսփաստը, որ ֆրանսիան զղրդուած իւր հիմունքի վերայ 1870 թ. սոսկալի յեղափոխութիւններով և ամենատեսակ թշուառութիւններով, դեռ գտնվում է ծանր խմորուելի դրութեան մէջ, դեռ չի գտել իւր ընթացքը, դեռ չի ամփոփուել իւր եղբրքների մէջ, դեռ չունի տաղանդաւոր առաջնորդներ էլ, որոնք կարողանային նորան օգնելու դուրս գալու իւր մշտական սովորական ճանապարհի վերայ . . . Բայց մենք երբէք

չենք հաւատալ այն թեթեամիտ պիսիմիստներին*)։ որոնք վստահա-
նումեն հաստատել թէ Քրանսիայի դերը Եւրոպայի պատմութեան մէջ
արդէն վերջացել է, ուրեմն և Փարէզ էլ արդէն ասել վերջացրել է իւր
երգը թէ, եթէ ոչ այսօր, գէթ վաղը որ և իցէ Եւրոպական մայրաքա-
ղաքներից (գիցուք Բեռլինը) կը բռնի Փարիզի տեղը և կը դառնայ Եւրո-
պայի և բոլոր աշխարհի համար տիպար, իրբե գերի՝ իրան հետեւեցնե-
լով նոցա, թէ լաւ բաների մէջ թէ վատ, թէ մեծ բանի մէջ և թէ չնչին,
— Ո՛չ. ամեն ոք, որ ճանաչումէ Փարիզին և Փարիզացիներին, որ ճա-
նաչումէ Քրանսիային, մինչև անգամ առանց կողմնապահութեան
պէտք է խոստովանուի, որ այդ անկարելի է։ Թէ Քրանսիան դեռ որ-
քան տեսակ տեսակ թշուառութեանց և յուզմանց տակ ընկնելու ևս
լինի, պէտք է եւրոպական քաղաքականութեան մէջ այն տեղը բռնի,
որը սակաւիկ ընդհատուելով, պատկանումէր նորան, մշտական երկու
դար ընթացքում, և թէ հետեւաբար, և Փարէզը, դեռ շատ նրկար մի-
ջոց իր անդրանկութիւնը և առաջնութեան դերը չի զիջանի տալ ոչ մի
եւրոպական մայրաքաղաքների։

(Թարգմ.) Զ. Տ. Չաքարեանց։

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ԱԲԵԼԻ.

(Շարունակութիւն, որտեղ Սերգեյ Ն. Գ.)

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ Բ.

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ.

(Հոգնոցի տակ փռուած են կանաչ խոտեր և ծաղիկներ՝ ու պտուղ-
ներ։ Շուրջ բազմել են, Ագամ ու Եւայ մէջ տեղ, աջ կողմը՝ Կային, Մի-
հալայ ու Ենոփք, իսկ ձախ կողմը՝ Եւայի մօտ, Աբէլ, և Թիրզայ.)

ԱԳԱՄ.

Իմ սիրելի որդիք, տեսէք թէ ինչպէս է ցնծութիւնը թագաւորել
ամենքիս գէմքի վերայ, որ արդիւնք է երկնային առաքինութեան, այ-
սինքն մաքուր խղճի և սիրոյ. իմացէք որ այդ առաքինութիւնը մեզ
Աստուծոյ տեսութեան կրկին պէտք է արժանի անէ. ընդ հակառակն

(*) Պիսիմիստ, Այն մարդն է, որ բոլորը տեսնումէ վատ կողմից, եւ հաստա-
տումէ, թէ ամեն բան աշխարհի մէջ դէպի վատն է ընթանում. նորա հասկացողու-
թիւնները ուղղակի հակադէր են Օպտիմիստի հասկացողութիւնների հետ, որը հակա-
միտ է ամեն բանի մէջ, լաւը տեսնելու եւ մտածելու, որ ամեն բան դէպի լաւն է ըն-
թանում աշխարհումը, յիշան, թարգմ.